



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**«ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» ՀԿ  
ԿԱՐԾԻՔ**

**«Հայաստանի հանրապետության Դատական օրենսգիրք» Մահմանադրական օրենքում  
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և  
լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ**



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՐՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային ժողովի մի խումբ պատգամավորների կողմից շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» Սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթը<sup>1</sup>: Չնայած նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխությունների և լրացումների նպատակին, այն է՝ դատական գործերի քննության արդյունավետության ապահովումը, մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պատշաճ իրացումը, գործերը ողջամիտ ժամկետներում քննելու և լուծելու պահանջի ապահովումը, այնուհանդերձ նման փոփոխությունները առաջարկվող տարբերակով ընդունվելու դեպքում ունակ են մեծացնել դատական իշխանության խնդիրները և խաթարել դատավորների անկախության երաշխիքները:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում նախատեսվող փոփոխությունները կքննարկվեն ստորև.

1. Ըստ նախագծի 1-ին հոդվածի՝ *Որպես դատական սանկցիայի առանձին տեսակ առաջարկվում է նախատեսել որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակումը, որն առաջարկվում է դատարանի կողմից կիրառելի դարձնել այն դեպքում, երբ դատավարության մասնակիցը, իր դատավարական իրավունքներից օգտվելիս, պարբերաբար չարաշահում է դրանք՝ վտանգելով դատավարության մյուս մասնակիցների իրավունքների պաշտպանության երաշխավորումն ու արդարադատության շահի ապահովումը:*

Օրենսդրական նման փոփոխությունը և դատավարական իրավունքների սահմանափակման հնարավորություն ստեղծելը խնդրահարույց է մի քանի պատճառներով:

Նախ, չի կոնկրետացվում, թե ինչ է նշանակում դատավարական իրավունքների «պարբերաբար չարաշահում» հիմքը, քանի որ դատավարության կողմի կողմից իր իրավունքների արդյունավետ իրականացումը կարող է ենթադրել և պահանջել որոշակի գործողությունների կատարում, և նման դեպքում առանց կոնկրետ չափանիշի «պարբերաբար չարաշահման» որակումը կարող է վերածվել դատարանի հայեցողությամբ և սուկ ներքին համոզմամբ իրավունքների կամայական սահմանափակման:

Նմանապես, Դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի առաջակվող փոփոխությամբ չի հստակեցվում սահմանափակման ենթակա դատավարական իրավունքների շրջանակը, ինչը կրկին լայն հայեցողություն է տալիս դատարանին և մեծացնում իրավունքների անհարկի սահմանափակման հավանականությունը:

2. *Նախագծի 10-րդ հոդվածով առաջարկվում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, Արդարադատության նախարարից և Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովից բացի, ԲԴԽ-ին ուղղակիորեն*

<sup>1</sup> <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=61201>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՐՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

դիմելու իրավունք ունենան նաև ֆիզիկական և իրավաբանական անձինք, եթե իրենց մասնակցությամբ կոնկրետ գործով առերևույթ առկա է **էական կարգապահական խախտման որոշակի հիմք և պահպանված են սահմանված ժամկետները**: Այս դեպքում, քաղաքացու կամ իրավաբանական անձի դիմումը ինքնին առիթ է լինելու հարցը ԲԴԽ-ի կողմից քննելու համար:

Ըստ այդմ առաջարկվում է Դատական օրենսգիրքը լրացնել 148.1 հոդվածով՝ *Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Բարձրագույն դատական խորհուրդ դիմում կարող է ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ իր մասնակցությամբ կոնկրետ գործով, եթե առերևույթ առկա է սույն օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին, 1.1-ին կամ 2-րդ կետով նախատեսված էական կարգապահական խախտման հիմք և պահպանված են սույն օրենսգրքի 144-րդ հոդվածով սահմանված ժամկետները*:

Դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտի կենտրոնական սկզբունքներից մեկը հանգում է նրան, որ դատավորի կողմից օրենքի մեկնաբանությունները, փաստերի գնահատումն ու ապացույցների կշռադատումը չպետք է հանգեցնեն քաղաքացիական կամ կարգապահական պատասխանատվության, բացի կոպիտ անփութության կամ խախտման դեպքերի<sup>2</sup>:

Այս սկզբունք-կանոնը պահանջում և ենթադրում է, որ կոնկրետ գործով դատավարության կողմերի մոտ դատավորի տված մեկնաբանություններից և/կամ առկա փաստերի գնահատումից դժգոհ լինելը դեռևս չի ենթադրում վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկում:

Ավելին, գործող Դատական օրենսգիրքը սահմանում է կարգապահական վարույթ հարուցելու ընթացակարգն ու ըստ այդմ իրավասություն ունեցող մարմիններին, այն է՝

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝

- Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը
- Լիազոր մարմինը
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ օրենքով նախատեսված դեպքերում<sup>3</sup>

Օրենսդրական նման կարգավորումը, լինելով համահունչ միջազգային չափանիշներին, գործում է որոշակի տրամաբանությամբ և նպատակով:

Մասնավորապես, Վենետիկյան հանձնաժողովը իր կարծիքներում բազմիցս կարևորել է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում միջնորդություն ներկայացնելու *նախնական փուլում ֆիլտրող մեխանիզմի առկայությունը*, որը թույլ կտա դատավորների վարքագծի վերաբերյալ անհիմն բողոքները մերժել: Նման մեխանիզմի նպատակն է կանխել դատավարությունից դժգոհ կողմերի գործողություններով դատավորներին կարգապահական վարույթներով ծանրաբեռնելը<sup>4</sup>:

<sup>2</sup> European Charter on the statute for judges

<sup>3</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 145:



ՀՀ ԱԺ պատգամավորների կողմից նման փոփոխության առաջարկ ներկայացնելը իրենում պարունակում է դատավորի կարգապահական պատասխանատվության ինստիտուտի վերաբերյալ մի շարք ռիսկեր:

Մասնավորապես, երկրորդ պլան է մղվում ֆիլտրող դերակատարում ունեցող Արդարադատության նախարարությունն ու Էթիկայի ու կարգապահական հարցերի հանձնաժողովը, քանզի քաղաքացիների համար ուղղակիորեն ԲԴԽ դիմելու հնարավորություն է ստեղծվում:

Ներկայացված նախագծով նախատեսվում է նաև, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձի դիմումը ինքնին առիթ է լինելու հարցը ԲԴԽ-ի կողմից քննելու համար, Եթե առերևույթ անհիմն չի ու պահպանվել են օրենքով նախատեսված պահանջները:

Նախագծով սահմանվում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձը դիմում է կարող ներկայացնել ԲԴԽ-ին *առերևույթ էական կարգապահական խախտման հիմքով*, որի համար դատավորի լիազորությունները կարող են դադարեցվել, որպիսի պայմաններում ԲԴԽ-ն ստանում է դատավորի լիազորությունները դադարեցնելու մենաշնորհ:

Այս ընթացակարգը ունակ է ծանրաբեռնել ԲԴԽ-ին հավելյալ անհարկի դիմումներով ու կարգապահական վարույթներով, իսկ դատավորներին առանց այդ էլ ծանրաբեռնվածությանը զուգահեռ ներգրավվել կարգապահական վարույթների մեջ: Ավելին, նման իրավակարգավորումը հնարավորություն է տալու ԲԴԽ-ին դառնալ դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության գործիք կիրառող միակ և կենտրոնական մարմինը:

Նման օրենսդրական փոփոխությունը լի է դատավորների անկախության ու դատական համակարգի արդյունավետությունը խաթարելու ռիսկերով և որևէ կերպ չի կարող ընդունելի լինել:

Ինչ վերաբերում է Նախագիծը ներկայացրած ՀՀ ԱԺ պատգամավորների կողմից կարգապահական պատասխանատվության դիմումների և հարուցված վարույթների թվային հարաբերակցությանը, ապա նման հիմնավորումը որևէ կերպ չի արդարացնում ուղղակիորեն ԲԴԽ դիմելու հնարավորություն ստեղծելը: Ավելին, այն հիմնված չէ մերժված դիմումների հիմքերի ու հիմնավորումների ուսումնասիրության վրա, որով միայն կարող էին վեր հանվել առկա խնդիրներն ու դրանց ուղղությամբ լուծումներ առաջարկվելին:

*3. Փոփոխությունների նախագծով առաջարկվում է նաև ԲԴԽ-ին լիազորություն վերապահել առանձնակի բարդություն ունեցող քրեական գործերի քննության արդյունավետությունը և դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պահպանումն ապահովելու նպատակով և էլնելով արդարադատության շահերից, տվյալ դատարանի կազմից ընտրել այդ*

<sup>4</sup> European Commission for democracy through :law (Venice Commission), North Macedonia opinion on the draft law on the judicial Council, 2019

[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2019\)008-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)008-e)



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՐՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

գործերի քննության համար վիճակահանության մասնակից դատավորներին՝ համապատասխան մասնագիտացումը կամ ենթամասնագիտացումը ունեցող այն դատավորների թվից՝ հաշվի առնելով վերջիններիս կողմից նախկինում նմանատիպ գործեր քննած լինելու հանգամանքը և այդ ընթացքում դատական նիստի բնականոն ընթացքը ապահովելու դրսևորած հմտությունները:

Բացի այդ, առաջարկվում է, որպեսզի ԲԴԽ-ն լիազորություն ունենա նշված չափանիշներին համապատասխանող գործը վերցնելու այն դատավորներից, ովքեր դրսևորել են նման գործեր քննելու իրենց մոտ անհրաժեշտ հմտությունների բացակայությունը:

Օրենսդրական նման փոփոխության առաջարկը ենթադրում է ԲԴԽ-ի կողմից ուղղակի միջամտություն դատական գործերի բաշխմանն ու դատավորների գործունեությանը, ինչն անընդունելի է դատավորի անկախության սկզբունքի պահպանության համատեքստում: Ավելին, նման կարգավորմամբ կարող է խախտվել «օրենքով ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության»՝ անձի իրավունքը:

Դատական խորհուրդները դատական իշխանության անկախությունը ապահովող, դատավորների նշանակումն ու պաշտոնական առաջխաղացումը քաղաքական գործընթացներից և քաղաքական ազդեցությունից մեկուսացնող և դատավորների հաշվետվողականության համար պատասխանատու մարմիններն են:

Հանդիսանալով դատավորների և իշխանության մյուս ճյուղերի միջև միջանկյալ օղակ՝ դատական խորհուրդները իրական հնարավորություն են ստեղծում դատական իշխանության անկախության և հաշվետվողականության համար:

Ներպետական օրենսդրությունը հստակ սահմանում է ԲԴԽ լիազորությունները: Դատական օրենսգիրքը մասնավորապես սահմանում է լիազորությունների բավականին լայն շրջանակ, ներառելով այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են դատավորների նշանակումը, առաջխաղացումը, կարգապահական պատասխանատվության ենթարկելը, լիազորությունների դադարեցումը, դատարանների ծախսերի նախահաշիվները հաստատելը, դատարանների պահուստային ֆոնդերի բաշխումը և մի շարք այլ գործառույթներ<sup>5</sup>:

ԲԴԽ լիազորությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս դրանք բաժանել երկու հիմնական խմբի՝ սահմանադրական լիազորությունների իրականացում, ինչպիսիք են դատավորների ընտրությունն ու նշանակումը, կարգապահությունը և Սահմանադրությամբ նախատեսված այլ գործառույթներ, և օժանդակող գործառույթներ՝ կրելով մասնամբ նաև վարչարարության բնույթ:

Առաջարկվող փոփոխություններով ԲԴԽ-ին հավելյալ և նման բնույթի լիազորություն տալը չի բխում վերջինիս սահմանադրաիրավական կարգավիճակից և նպատակից, և հանգեցնելու է ԲԴԽ-ի դատավորների գործունեությանը միջամտության ու դատական գործերի քննության ուղղակի վերահսկողության, ինչը դեմ է դատարանների անկախության սկզբունքին և կարող է հանգեցնել

<sup>5</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 89:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՐՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

առավել մեծ խնդիրների:

Ավելին, դատական իշխանության արդյունավետության բարձրացումն ու դատական գործերի արդարացի բաշխումը պահանջում է գործերի բաշխման ավտոմատացված ընթացակարգի հետագա կատարելագործում, և ոչ թե Խորհրդի կամ մեկ այլ մարմնի կողմից ուղղակի միջամտություն դատական գործերը դատավորների միջև բաշխման գործընթացին:

4. Առաջարկվող նախագծով նախատեսվում է լրացնել դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքերը, այն է. նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվում է Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասում լրացնել 1.1-ին կետ, որի համաձայն էական կարգապահական խախտում կհամարվի նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է.

ա. արդարադատության շահի կոպիտ ոտնահարման՝ առաջացնելով անդառնալի հետևանքներ.

բ. կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի կամ դատապարտյալի քրեական վարույթից կամ քրեական պատասխանատվությունից խուսափելուն»:

Դատավորների կարգապահական պատասխանատվության առաջարկվող առաջին հիմքը չի բավարարում հստակության և կանխատեսելիության չափանիշները: Մասնավորապես, արդարադատության շահի ոտնահարման կոպիտ լինելու, ինչպես նաև «անդառնալի հետևանքների» հստակ գնահատման չափանիշների բացակայությունը կարող են հանգեցնել դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության և լիազորությունների դադարեցման կամայական կիրառման:

Նույն կերպ, քրեական վարույթի շրջանակներում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի կամ դատապարտյալի քրեական վարույթից կամ քրեական պատասխանատվությունից խուսափելու հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առաջարկվող հիմքը խիստ խնդրահարույց է քրեական վարույթի շրջանակներում անձի հատկապես ազատության իրավունքի խախտման դեպքերի ավելացման առնչությամբ և անհիմն և անօրինական ազատությունից զրկելու (հատկապես կալանավորման և ազատությունից զրկելու հետ կապված պատիժների) թվի աճի, քանի որ նման կարգապահական պատասխանատվության հիմքի պայմաններում դատավորները կխուսափեն ազատ արձակել կասկածյալների, մեղադրյալիների նկատմամբ կիրառել ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց, ամբաստանյալների նկատմամբ կիրառել ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ կամ պայմանական վաղաժամկետ ազատել դատապարտյալների: Նման հիմքը հղի է ոչ միայն քրեական վարույթում ներգրավված անձանց իրավունքների խախտման լուրջ վտանգով, այլև ունակ է էականորեն վտանգել դատավորների անկախությունը:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերը ներկայացված հանգամանքներն ու պնդումները, գտնում ենք Դատական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասին, 89-րդ հոդվածի 18.1-18.6 կետերի լրացումը, 142-րդ հոդվածի 6-րդ մասի լրացումը, 148.1 հոդվածի լրացումը և դրանց վերաբերելի հետագա կարգավորումները անընդունելի են և իրենցում պարունակում են ռիսկեր դատավորների անկախության ու դատական իշխանության արդյունավետության ապահովման հարցում: